Կ-361'-23.08.2022-ՊԻ-011/0 *Լրամշակված նախագիծ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի 12-րդ մասում «Վարքագծի կանոնների,» բառերից հետո լրացնել «բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում

1) 1.1-ին կետը «վարքագծի կանոնների» բառերից հետո լրացնել «, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների,» բառերով:

2) լրացնել նոր 1.3-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.3) հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելը, նվերների հաշվառման գործընթացը կանոնակարգելը և վերահսկելը.»:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«3) վարում է հայտարարատու պաշտոնատար անձանց, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց և հայտարարագրերի, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների հաշվառման ռեեստրերը.»,

2) լրացնել նոր 5.1.-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1) հրապարակում է նվերների հաշվառման ռեեստրի հրապարակման ենթակա տվյալները.»:

3) 6-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«6) քննում և լուծում է հայտարարագրմանը և նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների վերաբերյալ գործեր.»:

4) լրացնել նոր 35-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«35) մշակում է հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների ընդունման սահմանափակումների կիրառման ուղեցույցներ:»:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածի 5.1-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«5.1. Հանձնաժողովն իրավասու է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, անձի գույքի էական փոփոխության (գույքի ավելացում, պարտավորությունների նվազում կամ ծախս) կասկածի դեպքում նրանից պահանջելու ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-ին հոդվածով.

«**Հոդված 25.1. Իրավիճակային հայտարարագիր պահանջելու հիմքերը.**

1. Հանձնաժողովի պատճառաբանված որոշման հիման վրա գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր պահանջելու հիմքերն են՝ հայտարարագրման ենթակա տվյալների արժանահավատության, ամբողջականության, գույքի էական փոփոխության (գույքի ավելացում, նվազում կամ ծախս) օրինականության վերաբերյալ հրապարակումները, Հանձնաժողովին ուղղված ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները, Հանձնաժողովի

լիազորությունների իրականացման ընթացքում, ինչպես նաև այլ պետական մարմիններից Հանձնաժողովին հայտնի դարձած տեղեկությունները:

2. Իրավիճակային հայտարարագիրը Հանձնաժողով է ներկայացվում սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշման ստացման պահից մեկամսյա ժամկետում:

3. Իրավիճակային հայտարարագրերի վերլուծությունն իրականացվում է սույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 6. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը «վարքագծի կանոնների առերևույթ խախտումների» բառերից հետո լրացնել «, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների,» բառերով:

Հոդված ~~5~~7. Օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«6. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման և վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի շահերի բախման հարցերով Հանձնաժողովի եզրակացությունները դրանց ընդունման պահից եռօրյա ժամկետում հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական համապատասխան պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որը ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի կայքէջում, որտեղ պաշտոն զբաղեցնող անձն զբաղեցնում է պաշտոն:»:

Հոդված ~~6~~8. Օրենքի 21-րդ հոդվածի 12-րդ մասից, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետից, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 25-րդ կետերից, 27-րդ հոդվածի վերնագրից,

27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից, 2-րդ և 5-րդ մասերից, 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերից հանել «իրավիճակային» բառը:

Հոդված ~~7~~.~~-~~9. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: